

ԴՐՈՇՄ

Դրոշմը խորհուրդ է, որով մկրտված անձը ստանում է Սուրբ Հոգու պարգեւները, երբ օծվում է մյուռոնով: Հայ Եկեղեցում այս խորհուրդը կոչվում է դրոշմ կամ կնունք, որը նշանակում է «կնիք»:

Դրոշմի արարողությունը կատարվում է անմիջապես մկրտությունից հետո:

Սուրբ Հոգու շնորհը քրիստոնեական կյանքում բաշխվում է դրոշմի արարողության ժամանակ՝ մյուռոնի միջոցով. այն ամրապնդում է մեր հոգիները, հաստատում մեր հոգեւոր ունակությունները եւ մեզ զինում քաջությամբ՝ կյանքի դժվարությունների դեմ պայքարելու համար:

Օծվելիս մարմնի մասերին բաշխվում են հատուկ շնորհներ:

«Իւղ անոյշ յանուն Յիսուսի Քրիստոսի, հեղեալ ի վերայ քո՝ կնիք երկնաւոր պարգեւացն անապականութեան»:

«**Ճակատը.** Այս անուշ յուղը, որ Հիսուս Քրիստոսի անունով դրոշնվում է ճակատիդ, երկնավոր, աննյութական պարգեւների կնիքը թող լինի»:

«**Ձաչան.** Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի լուսաւորեցե՛ք զաչս քո. զի մի՞ երբեք ննջեցես ի մահ»:

«**Աչքերը.** Այս կնիքը Հիսուս Քրիստոսի անունով թող լուսավորի աչքերդ, որպէսզի երբեք մահ չտեսնես»:

«**Ձականջան.** «Օծումն սրբութեան՝ եղիցի քեզ ի լսելութիւն աստուածային պատուիրանացն»:

«**Ականջները.** Այս Սուրբ Օծումը թող բացի ականջներդ, որպէսզի Աստծու պատվերները լսես»:

«**Ձեռտոտելիսն.** Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի, եղիցի քեզ հոս անուշահոտութեանկենաց ի կեանս»:

«**Հոտոտելիքը.** Այս կնիքը Հիսուս Քրիստոսի անվամբ թող հավիտենական կյանքի անուշ բույրը տա քեզ»:

«Զբերանն. Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի եղիցի քեզ պահպանութիւն բերանոյ եւ դուռն ամուր շրթանց քոց»:

«Բերանը. Այս կնիքը Հիսուս Քրիստոսի անվամբ բերանիդ ու շրթունքներիդ վրա դրված ամուր դուռ ու պահապան թող լինի»:

«Զձեռսն. Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի եղիցի քեզ պատճառ բարեգործութեան ամենայն առաքինի գործոց եւ վարուց»:

«Ձեռքերը. «Այս կնիքը Հիսուս Քրիստոսի անվամբ թող բարեգործության նպաստի՝ ամեն տեսակ բարի գործերի եւ առաքինի կյանքի»:

«Զսիրտն. Կնիքս աստուածային՝ սիրտ սուրբ հաստատեցէ ի քեզ, եւ հոգի ուղիղ նորոգեցէ ի փորի քում»:

«Միտքը. Այս աստվածային կնիքը թող սիրտդ մաքրի եւ նորոգի հոգիդ»:

«Զքամակն. Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի եղիցի քեզ վահան ամրութեան, որով կարասցես զամենայն նետո մուխս չարին շիջուցանել»:

«Մեջքը. Այս կնիքը Հիսուս Քրիստոսի անվամբ թող ամուր վահան դառնա, որով կարողանաս չարի արձակած բոլոր միացող նետերը մարել»:

«Զոտսն. Կնիքս աստուածային՝ ուղղեցէ զգնացս քո ի կեանսն յավիտենից. զի մի՞ սասանեցիս»:

«Ուտքերը. Այս աստվածային կնիքը դեպի հավիտենական կյանք թող ուղղի քայլերդ, որպեսզի երբեք չսասանվես» (Մաշտոց):

Մյուռոնը պատրաստվում է ձիթապտղի ձեթից եւ զանազան այլ անուշահոտ նյութերից ու ծաղիկների հատուկ յուղից: Հայ Առաքելական Եկեղեցում Մյուռոնօրհնության ծեսը կատարվում է յուրաքանչյուր 7 տարին մեկ: Միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին է վերապահված Մյուռոնօրհնության իրավունքը: